




ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ



100



Ա Կ Ա Դ Ե Մ Ի Կ Ո Ս  
Ա Շ Ո Տ Տ Ի Գ Ր Ա Ն Ի Ա Ս Լ Ա Ն Յ Ա Ն

Գիտաժողովի թեմատիկան՝ **ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ**

Զեկուցումների տևողությունը-15րոպե  
Հարցեր-5 րոպե

ԳԻՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Մելքոնյան Ռ.Լ.-Գիտական  
կոմիտեի նախագահ

Հովակիմյան Հայկ  
Իգիթյան Հայկ  
Ավագյան Սեդա

Զրբաշյան Ռ.Տ.

Ավագյան Ա.Վ.

Գալոյան Ղ.Լ.

Հովհաննիսյան Ա.Ե.

Մելիքսեթյան Խ.Բ.

Մելիք Ադամյան Հ.Հ.

Սահակյան Լ.Հ.

Երևան – 2019



## ԾՐԱԳԻՐ

7 փետրվարի, 10:00

**ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում հանդիսավոր նիստի բացում**

- Բացման խոսք - ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Մարտիրոսյան Ռ.Մ.
- Ա.Տ. Ասլանյան՝ բազմավաստակ գիտնական և պետական գործիչ - ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մելքոնյան Ռ.Լ.
- Ելույթներ, հիշողություններ

11.00-12.00 սուրճի ընդմիջում (60 րոպե)

**Գիտական զեկուցումներ (Երկրաբանական ինստիտուտի դահլիճում)**

**Նիստի 1-ին մաս (նախագահ Ռ. Մելքոնյան)**

12.00-12.20 **Meliksetian Kh.**, Navasardyan G., Jrbashyan R., Savov I., Gevorgyan H., Manucharyan D., Grigoryan E. and Misakyan M. NEW GEOCHRONOLOGICAL DATA AND INTERACTIONS BETWEEN POLYGENETIC AND MONOGENETIC VOLCANISM OF SYUNIK AND VARDENIS VOLCANIC UPLANDS.

12.20-12.40 **Գալոյան Ղ.Լ.** ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՕՖԻՈԼԻՏՆԵՐԻ ՊԵՏՐՈԼՈԳԻԱԿԱՆ, ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ:

12.40-13.00 **Sahakyan L., Avagyan A., Grigoryan T., Hayrapetyan A., Stepanyan Zh.** UPPER JURASSIC PENTACRINITES (LILIES OF THE SEA) OF ARTSAKH.

13.00-13.20 **Ավագյան Ա.Վ.** Ակնարկ Հայաստանի ակտիվ տեկտոնիկայի վերաբերյալ:

### **2-րդ մաս (նախագահ Լ. Սահակյան)**

13.20-13.40 **Հովհաննիսյան Ա.Հ.** ՀՀ ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ:

13.40-14.00 **Оганесян А.Е.,** Арутюнян М.А., Магакьян Н.И., Овакимян С.Э., Сирадегян В.В. ЗОНАЛЬНОСТЬ РАСПРЕДЕЛЕНИЯ МЫШЬЯКА В РУДАХ КАДЖАРАНСКОГО МЕСТОРОЖДЕНИЯ.

14.00-14.20 **Ավագյան Թ.Ա.,** Ստեփանյան Ժ.Հ., Մկրտչյան Ս.Վ., Հովակիմյան Հ. Գ., Սահակյան Լ.Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՀՐԱԲԽԱՆՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԴԻԱՏՈՄԻՏԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱԶՄԻ, ՈՐԱԿԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

14.20-15.00 ընդմիջում ԵԳԻ թանգարանում (40 րոպե)

### **Գիտական զեկուցումներ (Երկրաբանական ինստիտուտի դահլիճում)**

#### **3-րդ մաս (նախագահ Ղ.Գալոյան)**

15.00-15.20 **Քարամյան Ռ.Ա.,** Իզիթյան Հ.Ա., Մինասյան Ռ.Ս. ՔՐՈՄԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՖԻԶԻԿԱ - ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ (ՀՀ և ԱՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆՆԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ):

15.20-15.40 **Агабалян А.Ю.** ОПРЕДЕЛЕНИЕ ПОКАЗАТЕЛЕЙ УДЕЛЬНОЙ ОТХОДНОСТИ ПРИ ОТКРЫТОЙ ГЕОТЕХНОЛОГИИ.

15.40-16.00 **Մելիք-Աղամյան Հ.Հ.,** Բարսյան Տ. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՂԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐԸ:

Երիտասարդ մասնագետների զեկույցներ 08.02.2019թ.

4-րդ մաս (նախագահ Հ. Հովակիմյան)

12.00-12.20 **Atayan L.** JURASSIC BONINITIC AND POSSIBLE ADAKITIC MAGMATISM FROM THE SOMKHETO-KARABAGH ISLAND-ARC SYSTEM, LESSER CAUCASUS.

12.20-12.40 **Grigoryan T.**, Sahakyan L., Zakrevskaya E. LITHOLOGY AND DISTRIBUTION OF PLANKTONIC FORAMINIFERA OF THE MALISHKA SECTION (ARMENIA).

12.40-13.00 **Սահակյան Ք.**, Սահակյան Լ., Աթոյանց Ա. ՍԵԱՆԱ ԼՃԻ ՀՈԼՈՑԵՆԻ ՆՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՊԱԼԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

13.00-13.20 **Աթայան Թ.** ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԱԼԻՐԻ ՎՐԱ:

13.20-13.40 Serobyan V., Grigoryan A., Crônier C., Mottequin B., **Mayilyan R.**, Danelian T. PROGRESS ON THE MID-PALAEOZOIC BRACHIOPOD RECORD OF ARMENIA BASED ON REVISED TAXONOMY AND BIOSTRATIGRAPHY.

**ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԱԼԻՐԻ ՎՐԱ**

**Աթայան Թ.**

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ  
ք. Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24ա  
e-mail: tatulatalyan@gmail.com

**Հանգուցային բառեր՝** *արխեոսեյսմոլոգիա, Սուրբ Հովհաննես Կարապետ, Վանքի խզվածք, սողանք*

Հետազոտությունը վերաբերում է ՀՀ Արարատի մարզի Սուրբ Հովհաննես Կարապետ վանքի վրա երկրաբանական ազդեցություններին: Այն գտնվում է ՀՀ Արարատի մարզի քրյալ Մոշաղբյուր (Ջնջուլու) գյուղատեղից 1կմ հյուսիս-արևելք, Ուրծի լեռների հյուսիսային փեշին, Վեդի-Լուսաշող ճանապարհի աջ կողմում: Կառուցվել է 1301թ.-ին՝ բաղկացած է 3 մոնումենտալ շինություններից և միաբանության բազմաթիվ կառույցներից: Այս պահին վանքը գտնվում է կիսավեր վիճակում: Կատարված երկրաբանական (երկրաբանական կտրվածք) և ինժեներաերկրաբանական հետազոտություններին (կազմվել է սողանքը և հուշարձանը ընդգրկող խոշորամասշտաբ ռելիեֆի եռամասշտաբ քարտեզ) զուգընթաց կազմվել են ուսումնասիրվող օբյեկտի առավել դեֆորմացված կառուցվածքային բաղադրիչների հատակագծերը:

Ուսումնասիրվող տարածքում է գտնվում Վանքի խզվածքը, որն ունի վերնետքային կինեմատիկա: Խզման ակտիվությամբ պայմանավորված ձևավորվել է Վանքի անտիկլինալը, որի միջուկում առկա են պերմի կրաքարերը, որոնց վրա աններդաշնակ նստած են ստորին էոցենի հասակի միկրոկոնգլոմերատները և օրգանածին-բեկորային կրաքարերը: Հետազոտությունների համաձայն անտիկլինալի զարգացումը տեղի է ունեցել հետ միջին էոցեն շրջանում:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վանքի համալիրի ավերածությունները Վանքի խզվածքի ակտիվացման հետևանք չեն: Այն կապված է 1840թ. պատմական, ավերիչ երկրաշարժի հետևանքով ակտիվացած սողանքի հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՀՐԱԲԽԱՆՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԴԻԱՏՈՄԻՏԱՅԻՆ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱԶՄԻ, ՈՐԱԿԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ավագյան Թ.Ա., Ստեփանյան Ժ.Հ., Մկրտչյան Ս.Վ., Հովակիմյան Հ.Գ., Սահակյան Լ.Հ.**

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,  
Երևան 0019, Մ.Բաղրամյան պող. 24ա,

**Հանգուցային բառեր՝** դիատոմիտ, դիատոմեա, ֆոսֆորային պարարտանյութ

Հայաստանի դիատոմիտային հանքավայրերը գտնվում են պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխա-դիատոմիտային ֆորմացիայի մեջ, որը ձգվում է Ախուրյան գետի ավազանից դեպի հարավ-արևելք Ռոտան գետի ավազան, որտեղ անջատված են Ախուրյանի, Քասախ-Հրազդան-Ազատի, Սևանի և Միսիանի դիատոմիտաբեր ավազանները: Հրաբխա-դիատոմիտային ֆորմացիայի մաքսիմալ հզորությունը 350-400մ է, որը նկատվում է Ախուրյանի և Միսիանի դիատոմիտաբեր ավազաններում, ֆորմացիայի մինիմալ հզորությունը 1,5-15մ է, որը նկատվում է Քասախ-Հրազդան-Ազատի, Արփիի և Սևանի դիատոմիտաբեր ավազաններում:

Նստվածքային դիատոմիտային հանքավայրերի 97-99% կազմված է նստվածքային առաջացումներից, որտեղ գերակշռում են դիատոմիտները, կավերը և դիատոմային կավերը, իսկ էքսպլոզիվ նյութերը կազմում են 2-3%, և ներկայացված են մինչև 10-20 սմ հզորությամբ՝ հրաբխային մոխրի, պեմզային և ավազային առաջացումներով:

Հրաբխանստվածքային դիատոմիտային ավազաններում դիատոմիտները հերթափոխվում են կավային դիատոմիտներով, դիատոմային-կավերով, լավաներով (բազալտային անդեզիտներ, անդեզիտադալիտներ, տրախիբազալտներ, տրախիանդեզիտներ, ռիոլիտներ), տուֆերով, պիրոկլաստներով, հրաբխատերրիզեն, ինչպես նաև երկաթացված պեմզա-հրաբխային փոշու և այլ տեսակի խառնուրդ ապարներով, որոնք ներկայացված են շերտերով, կոնկրեցիաներով և այլ տեսակի մորֆոլոգիական ձևերով, որոնք խանգարող հանգամանք են դիատոմիտային օգտակար հաստվածքի շահագործման համար: Հաշվի առնելով այս հանգամանքը, նշված ապարների վրա կատարվել են գիտական և գիտափորձարարական աշխատանքներ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի և անօրգանական քիմիայի ինստիտուտի աշխատողների հետ համատեղ: Արդյունքները լուսաբանվել են “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրերում: Հրաբխաբեկորային նյութերի առկայությունը բերում է դիատոմիտային ավազանի հիդրոքիմիական և այլ պայմանների խախտման, որի արդյունքում փոքրանում է դիատոմային ջրիմուռների պահպանվածության աստիճանը: Ջարդված զրահները ցեմենտացվում են կավային և տերրիզեն նյութով, իսկ նմանատիպ դիատոմիտային ապարները արդյունաբերական տեսանկյունից համարվում են միջին և ցածր որակի: Դիատոմային ջրիմուռների զրահների ջարդվածությունը և լուծելիության աստիճանը կախված է ոչ միայն ստրուկտուրա-մորֆոլոգիական առանձնահատկություններից այլ նաև նրանց կազմից: Բարձր դիմացկունություն ունեն *coscinodiscus* խմբի դիատոմային ջրիմուռները, քանի որ նրանց զրահները ունեն պաշտպանիչ շերտ, որտեղ կլանվում են երկաթի, ալյումինումի, մագնեզիումի գալիի, կադմիումի, և այլ էլեմենտներ, որոնք առաջացնում են չլուծվող սիլիկատներ, ինչով էլ

պայմանավորված է դիատոմային զրահների լուծելիության արագության ցածրացումը: Ամորֆ սիլիկահողի պարունակությունը *chaetoceros* ձևում հասնում է 40%, իսկ հաստ խեցիով կլորավուն *coscinodiscus* ձևի խեցիում 75%:

Դիատոմիտային հումքի որակի գնահատման համար օգտագործվում է հատիկաչափական, քիմիական, ֆիզիկական, միներալապետոգրաֆիական ուսումնասիրությունները: Դիատոմիտային հումքի լիարժեք որակական գնահատականի համար կարևորում ենք հաշվի առնել նաև բիոգեն սիլիկահողի պարունակությունը, ապար կազմող ջրիմուռների ամբողջական զրահների քանակը (1գ նստվածքում միլլիոն հատ), մեծությունը, պահպանվածության աստիճանը, նրանց տոկոսային պարունակությունը:

Առաջարկվում է Հայաստանի հրաբխանստվածքային դիատոմիտային հանքավայրերի համալիր շահագործման եղանակ, ինչը ավելի արդյունավետ է: Այս գիտական ուսումնասիրությունների արդյունքում և գիտափորձարարական աշխատանքների միջոցով վնասակար խառնուրդ ապարներից (որոնք տասնյակ տարիներ համարվել են դիատոմիտային հանքավայրերի շահագործմանը խանգարող հանգամանք) լաբորատոր պայմաններում ստացվել են ֆիլտրացիոն, սորբցիոն, թեթև շինարարական աղյուսներ, տարբեր տեսակի և գույնի ապակիներ, ֆոսֆորային պարարտանյութեր և բիոգեն կարբոնատային միներալային հումքեր: վերջինս որպես թռչունների լցակեր փորձարկվել է Լուսակերտի «Էլիտ» թռչնաֆաբրիկայում, իսկ ֆոսֆորային պարարտանյութը՝ Ագրարային համալսարանի կողմից Արզական համայնքի մեկ հեկտար տարածքում: Ստացված աղյուսները գերազանց են, լուսաբանված և արտոնագրված:

**ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՕՖԻՈՒԼՏԵՐԻ ՊԵՏՐՈՒՈՒԳԻԱԿԱՆ, ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

**Գալոյան Ղ.**

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, Երևան 0019, Մ.Բաղրամյան պող. 24ա,  
e-mail: ghazar.galoyan@gmail.com

**Հանգուցային բառեր՝** Օֆիոլիտ, BABB, OIB

Սկսած 2003թ., շնորհիվ հայ-ֆրանսիական գիտական համագործակցության (Մ.Սոսուն, Յ.Ռոլլանդ, Մ.Կորսինի, Տ.Դանելիան, Կ.Մյուլլեր, Մ.Հասսիգ, Լ.Մելիքյան, Ղ.Գալոյան, Ռ.Մելքոնյան, Ա.Ավագյան, Գ.Ասատրյան, Լ.Սահակյան), կարևորագույն արդյունքներ ստացվեցին Փոքր Կովկասի, մասնավորապես, ՀՀ տարածքի օֆիոլիտների (Ամասիա, Ստեփանավան, Սևան և Վեդի տեղամասեր) ուսումնասիրման ասպարեզում: Նոր մոտեցումների ու ժամանակակից անալիտիկ մեթոդների կիրառմամբ հնարավոր դարձավ վերականգնել օֆիոլիտային համալիրի

տարբեր մագմատիկ սերիաների տեղադրման երկրադինամիկ իրավիճակն ու պայլեոաշխարհագրությունը:

Հայկական օֆիոլիտները բնորոշվում են սերպենտինացված պերիդոտիտների գերակշռությամբ և դրանցում գաբրոների, դիորիտների ու պլագիոգրանիտների ինտրուզիվ մարմինների ներկայությամբ, որոնք միասին ծածկվում են փոքր հզորության փիլոու լավաներով կամ անմիջապես պելագիկ նստվածքներով՝ ռադիոլարիտներ, հասպիսներ ու կրաքարեր: Զուգահեռ դայկային համալիրը հիմնականում բացակայում է: Լիթո-կառուցվածքային և պետրոլոգիական-երկրաքիմիական տվյալները ցույց են տալիս, որ բոլոր այս մասիվները նույնանման են և կազմում են մեկ միասնական համալիր:

Գաբրոների կամ դիորիտների ամֆիբոլներում Ar-Ar մեթոդով Ֆրանսիայի Նիսի համալսարանում որոշվել են համապատասխանաբար 165-171 Ma (Սևան՝ Արտանիշ), 169-176 Ma (Ամասիա), 155-178 Ma (Վեդի՝ Դաշտաքար) պլատո հասակները: Հետևաբար օվկիանոսային կեղևի ձևավորման հասակը համապատասխանում է վաղ-միջին յուրային, որը հաստատվել է նաև ռադիոլարիտների հնէաբանական տվյալներով: Այս խմբի մագմատիկ ապարների համար գլխավոր դերը պատկանում է թույլ արտահայտված ալկալային տենդենցով տոլեիտային (N-MORB տիպ) մագմայի ֆրակցիոն բյուրեղացմանը՝ սկսած ուլտրամաֆիտներից, գաբրոներով մինչև դիորիտներ ու պլագիոգրանիտներ: Բոլոր լավաների (բազալտ, բազալտային անդեզիտ) երկրաքիմիական սպեկտրները բնորոշվում են Nb և Ta բացասական անոմալիաներով: Համալիր երկրաքիմիական ուսումնասիրություններով բացահայտվել է օֆիոլիտային լավաների պատկանելությունը ծայրամասային ծովերի կամ հետադեղային ավազանների բազալտների՝ BABB տիպին:

Հաջորդ մագմատիկ դրսևորումը, որն արտահայտված է ալկալային սերիայի լավաներով, բացահայտվել է բոլոր ուսումնասիրված տեղամասերում և հստակ սահմանազատվել բուն օֆիոլիտից՝ առաջին անգամ մեր կողմից: Երկրաքիմիական տվյալներով բացահայտվել է սույն մագմատիզմի պատկանելությունը օվկիանոսային կղզիների բազալտների՝ OIB տիպին: Այս համալիրը, ենթադրաբար, գոյացել է մանթիական պլյումի հաշվին վաղ-ուշ կավիճ սահմանազծում (117-95 Ma): Վերջինիս հայտնաբերումը բոլոր նշված տեղամասերում վկայում է լայնածավալ հրաբխային գործունեության մասին՝ հավանաբար, օվկիանոսային հզոր պլատոյի կամ մանր կղզիների խմբի ձևավորմամբ:

Հետագա և վերջին մագմատիկ դրսևորումն արտահայտված է կրա-ալկալային սերիայի լավաներով (Ստեփանավան) կամ դայկերի (Սևան) և խոշոր օլիստոլիտների տեսքով (Վեդի): Ըստ իրենց երկրաքիմիական վարքագծի, սույն կրա-ալկալային առաջացումները պատկանում են կղզադեղային բազալտների՝ IAB տիպին և գոյացել



են, հավանաբար, ներովկիանոսային սուբդուկցիայի հաշվին՝ ուշ կավճում: Սուբդուկցիայի այս ֆազին (Ստեփանավանում կապույտ թերթաքարերի առաջացմամբ՝ 95-90 Ma) հաջորդել է հայկական օֆիոլիտային պլաստի (թեփուկի) օբդուկցիան կոնյակի ժամանակահատվածում: Այն արտահայտված է սինկլինալային կառույցներում Վեդիի ծածկոցի կամ գոտու (և դրա էկվիվալենտների) տեսքով, որոնք տեղադրված են գոնդվանական ծագման Հարավ հայկական միկրոսալի վրա: Սույն միկրոսալի ու եվրասիական ծայրամասի վերջնական բախումը տեղի է ունեցել, հավանաբար, սկսած կամպան-մասստրիխտից (73-70 Ma, Ar-Ar), իսկ կայնոզոյան առաջացումները ծածկել են օֆիոլիտային կարը Սևան-Շիրակի սինկլինորիումում:

**ՊԱԼԵՈՍԵՑՄԱԲԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՓԱՄԲԱԿ-ՍԵՎԱՆ-ՍՅՈՒՆԻՔ ԱԿՏԻՎ ԽՉՎԱԾՔԻ ՔԱՐՔԱՐ-ԾՂՈՒԿ  
ՓՈՒԼ-ԱՓԱՐԹԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃՅՈՒՂԻ ՎՐԱ**

**Մարտիրոսյան Մ.**

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտ  
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24ա, 0019  
e-mail: mhermartirosian@gmail.com

**Հանգուցային բառեր՝ պալեոսեյսմաբանություն, Քարքար-Ծղուկ, փուլ-ափարթ:**

Սեյսմիկ ռիսկի գնահատման գործում որոշիչ են պալեոսեյսմաբանական և մորֆոտեկտոնական ուսումնասիրությունները, որոնք իրականացվեցին Սև լճից հյուսիս ընկած Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի Քարքար-Ծղուկ փուլ-ապարթի արևելյան ճյուղի 3-3,5կմ երկարությամբ հատվածում: Ուսումնասիրվող տեղամասերում անցկացվեցին պալեոսեյսմաբանական երկու խրամուղիներ՝ վերջին սեյսմիկ իրադարձությունները բացահայտելու նպատակով:

Առաջին խրամուղում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մակերեսային հողաշերտը ծածկում է հրաբխային առաջացումները և ստորին կավային շերտը կտրող գրաբենային կառույցը:

Երկրորդ խրամուղում շերտագրական վերլուծությունը բացահայտեց առնվազն մեկ սեյսմիկ իրադարձություն: Բացահայտված վարնետքային խախտումը, այս դեպքում նույնպես ծածկված է ժամանակակից հողաշերտով:

Հասակագրման համար ընտրվել են 9 ( $C^{14}$ ) նմուշներ, որոնցից հինգը՝ առաջին խրամուղուց, իսկ մնացած չորսը՝ երկրորդից: Խաչաձև ընդհանրական վերլուծությունը ապացուցում է երիտասարդ հոլոցենի հասակի տեկտոնական ակտիվացում՝ Քարքար-Ծղուկ փուլ-ափարթի արևելյան ճյուղի վրա:

Ըստ ստացված արդյունքների առաջին խրամուղում սեյսմիկ իրադարձությունը

տեղի է ունեցել մինչ 2855±30 cal BP, իսկ երկրորդում 1865±30 cal BP-ից մինչև 2953±30 cal BP միջակայքում: Առաջին խրամուղում ուղղաձիգ տեղաշարժի մեծությունը կազմում է մոտավորապես 1.75մ, որը համապատասխանում է 6.9 մոմենտային մագնիտուդի երկրաշարժի ըստ (Wells, Coppersmith 1994):

### Գրականության ցանկ

Wells D.L., Coppersmith K.J. Empirical relationships among magnitude, rupture length, rupture area, and surface displacement. Bull. Seismol. Soc. Am. 1994, 84, p. 974– 1002.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՂԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐԸ

Մելիք-Ադամյան Հ.\*, Բաբայան Տ.\*\*

\*ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ Երևան 0019, Բաղրամյան պող.24ա

\*\*ՀՀ Պետական մանկավարժական համալսարան Երևան 0010, Տիգրան Մեծ պող. 17

e-mail: [hmelik-adamyany@mail.ru](mailto:hmelik-adamyany@mail.ru), [tigranmap@yahoo.com](mailto:tigranmap@yahoo.com)

**Հանգուցային բառեր`** Հայկական լեռնաշխարհի, քարաղ, հասակ

Հայկական լեռնաշխարհում աղային նստվածքները ներկայացված են գերազանցապես քարաղով, որի արդյունաբերական նշանակության պաշարները հայտնի են միմիայն Երևանի գրաբեն սինկլինորիումի և նրան հարակից տարածքներում` Նախիջևանի ինքնավար հանրապետության և Արևմտյան Հայաստանի` ներկայիս արևելյան Թուրքիայի (Կողբ, Կաղզվան, Օլթի) տարածքներում (Мелик-Адамян 2016, Վեհունի 2001): ՀՀ տարածքում քարաղի նստվածքները ներառում են մինչև 1400մ հզորությամբ ջրվեժի աղաբեր-գիպսաբեր շերտախումբը : Նրա երկրաբանական հասակը, ինչպես նաև վերը նշված արևելյան Թուրքիայի աղաբեր նստվածքներինը մինչև այժմ թվագրվում է ինչստորաբաժանված միջին միոցենի հասակով (15,97-11,6 մլն. տարի ընկած ժամանակահատված) (Վեհունի 2001, Սարգսյան 2013) կամ էլ չստորաբաժանված Արևելյան Փարաթեթիսի չոկրակ-կարագան հարկերի միջակայքով (Стратиграфический словарь СССР 1982), որը ըստ նորագույն տվյալների ընդգրկում է 13,7-13,5 մլն. տարի ընկած ժամանակահատված (Попов и др. 2018): Նախիջևանի քարաղային նստվածքները թվագրվում է կարագանի ենթահարկով (13,9-13,4 մլն. տարի միջակայքում) (Стратиграфия СССР 1986) :

Բազմաթիվ հորատանցքային նյութերի` այդ թվում նաև ֆոնդային տվյալների (բրածո օստրակոդներ և փափկամարմիններ, բեղմնիկաձաղկափոշի և այլն) մանրամասն և համալիր ուսումնասիրության, ինչպես նաև Արևելյան Փարաթեթիսի հնաշխարհագրական իրավիճակի (պալեոկլիմա, ջրավազանի պալեոաղիություն) համեմատական վերլուծության արդյունքում առաջին անգամ ապացուցվել է, որ տարածաշրջանի` արդյունաբերական նշանակություն ունեցող քարաղի բոլոր նստվածքները երկրաժամանակագրական տեսանկյունից միաժամանակյա

գոյացումներ են: Նրանք առաջացել են կարագանի հարկի՝ միջին կարագանի վարենյան ենթահարկի ժամանակահատվածում (մոտ 14,4-13,9 մլն. տարի առաջ), երբ Արևելյան Փարաթեթիսում ընդհանուր առմամբ գերիշխում էին շատ տաք, ամառային-չորային պայմաններ, իսկ ծովի աղիությունը շատ բարձր էր և տատանվում էր 30-40% սահմաններում (Мелик-Адамян 2016):

Կողբի, Կաղզվանի և Նախիջևանի աղահանքերը շահագործվել են դեռևս վաղնջական ժամանակներից՝ ամենայն հավանականությամբ, նեոլիթից սկսած: Ներկայումս Նախիջևան քաղաքի շրջակայքի քարաղի չորս հանքավայրերի (Մուստ, Նախիջևան, Շաքարաբադ-Կողաղիզ և Նեգրամ) կանխատեսումային ընդհանուր պաշարները կազմում են մոտավորապես 2,8 միլիարդ տ., իսկ A+B+C1 կատեգորիաներով հաստատված պաշարները՝ 1,27 միլիարդ տ., ընդ որում նրանցից ամենախոշորը Նեգրամի հանքավայրն է՝ Նախիջևան քաղաքիցից 12կմ հարավ-արևմուտք, որի պաշարները B+C1 կատեգորիաներով հաշվարկված են 736 մլն. տ. սահմաններում (Нагиев и др. 2009):

Ներկայումս Կողբի աղահանքի հաստատված պաշարները գնահատվում են 100 մլն. տ., Կաղզվանինը՝ 60 մլն. տ., իսկ Օլթիինը՝ 30 մլն. տ.: Հարկ է նշել, որ 1990-ական թթ. վերջերին Կողբի աղահանքից տարեկան արդյունահանվել է միջինը 20 հազար տ., իսկ Կաղզվանի աղահանքից՝ մոտ 12 հազար տ., որոնց արժեքը տարեկան առնվազն 1 մլն. դոլար էր: Այն հաշվարկված է 1997թ.-ի մեծածախ վաճառահանման գներով՝ մոտ 32,6 դոլար՝ 1 տոննա չմշակված քարաղի դիմաց (Ertem et al. 2001): Ըստ 70-ական թթ. տվյալների՝ ՀՀ տարածքի քարաղի պաշարները՝ հաշվարկված A+B+C1 կատեգորիաներով, կազմում էին 446 մլն. տ. (Геология СССР 1975): Այսպիսով, տարածաշրջանի ամենահարուստ պաշարներով աղահանքերը այժմ կենտրոնացված են Նախիջևանի ինքնավար հանրապետության տարածքում:

### **Գրականության ցանկ**

Սարգսյան Հ.Հ. Հայաստանի երկրաբանական հանրագիտարան: ՀՀ Երկրաբանական ակնարկ: Շերտագրություն և շերտախմբեր Երևան Գեոիդ 2013, 443 էջ:

Վեհունի Ա. Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները. Երևան ԵՊՀ 2001, 431 էջ:

Геология СССР т. XLIII Армянская ССР. Полезные ископаемые. М. Недрa 1975 – 170с.

Мелик-Адамян Г.У. Межрегиональная корреляция эвапоритов южного Кавказа. Доклады X научных чтений, посвященных памяти М.М. Муратова “Проблемы региональной геологии северной Евразии”. М.: МГРИ-РГГРУ 2016, с. 63-65.

Нагиев В.Н., Мамедов И.А. Полезные ископаемые Нахчыванской Автономной республики Баку, Ширваннешр 2009, 276с.

Попов С.В., Головина Л.А., Радионова Э.П., Гончарева И.А. и др. Стратотипы и опорные разрезы неогеновых региоярусов юга России и проблемы их границ. Неоген и квартал России: стратиграфия, события и палеогеография М. ГЕОС 2018, с. 47-54.

Стратиграфический словарь СССР. Палеоген, неоген, четвертичная система Ленинград. Недра, 1982, 611 с.

Стратиграфия СССР. Неогеновая система, полутом 1. М. Недра, 1986, 418 с.

Ertem M.E., Engin V.T., Ertem H.I. Salt in Turkey 17<sup>th</sup> International Mining Congress and Exhibition of Turkey – IMSET 2001, p. 635-641.

**ՀՀ ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

**Հովհաննիսյան Ա. Հ.**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Տերյան 105,

e-mail: [hovarmen1961@gmail.com](mailto:hovarmen1961@gmail.com)

**Հանգուցային բառեր՝** պղինձ, ցինկ, կապար

Դիտարկվում են Հայաստանի մետաղական հանքաքարերի հենքի վրա գտված պղնձի և ցինկ-կապարային արտադրանքի արտադրման հնարավորությունները:

Բերվում են պղինձ, ցինկ և կապար պարունակող հանքաքարերով ներկայացված շահագործվող և կոնսերվացված հանքավայրերի հանքային մարմինների բնորոշ առանձնահատկություններն ու օգտակար հանածոների որակաքանական բնութագրերը: Ընդերքում պղնձի պաշարներով հատկապես առանձնանում է ՀՀ Սյունիքի մարզը, որտեղ կենտրոնացած են Հայաստանի պղինձ պարունակող շահագործվող հանքավայրերի պղնձի ավելի, քան 75%-ը, որից գրեթե 90%-ը բաժին է ընկնում Քաջարանի հանքավայրին: Երկրորդ տեղն է գրավում Լոռու մարզը, որտեղ պղնձի պաշարները ընդերքում կազմում են մոտ 20%, որից 90%-ից ավելի բաժին է ընկնում Թեղուտի հանքավայրին: Կաշենի հանքավայրի պղնձի պաշարները կազմում են պղինձ պարունակող շահագործվող հանքավայրերի պղնձի պաշարների 3%-ը:

Հայաստանի ներկայումս գործող լեռնահարստացման կոմբինատներից ըստ արտադրական հզորությունների ուշադրություն է գրավում ՀՀ Լոռու մարզը, որտեղ Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատը՝ Ախթալայի և Կաշենի լեռնահարստացման կոմբինատների հետ մեկտեղ՝ ընդլայնման ծրագրի իրացման դեպքում, կարող են հումքով ապահովել գտված պղնձի արտադրության մոտ 60%-ը:

Այս առումով, նոր պղնձաձուլական գործարանի շինարարությունը ունի բացառիկ մեծ նշանակություն Հայաստանի տնտեսության համար, հատկապես, արդյունաբերության այլ ճյուղերի, մասնավորապես, մալուխային արտադրության, զարգացման պատճառով՝ բազմապատկական արդյունքի ստացման առումով:

Հումքային ապահովվածության իրականացված վերլուծության արդյունքում գտված պղնձի արտադրման մետալուրգիական գործարանի կառուցման առավել գերադասելի տեղն է հանդիսանում Հայաստանի Լոռու մարզի Ալավերդի քաղաքի շրջանը, որն ունի խոր ավադոյթներ պղնձածուլման գործում և բարձր պրոֆեսիոնալիզմով ու որակավորմամբ կադրեր:

Հետախուզված հանքավայրերի առումով հանրապետության ընդերքում առկա են մոտ 2 մլն. տ. ցինկի և 1 մլն. տ. կապարի պաշարներ, սակայն, ներկայում, որպես վերջնարտադրանք է հանդիսանում միայն Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի օգտակար հանածոյի պաշարների հենքով գործող Կապանի հանքահարստացման կոմբինատի կողմից արտադրվող ցինկի խտանյութը:

Լիովին իրատեսական է Հայաստանում ցինկ-կապարային արտադրանքի մետալուրգիայի ստեղծումը՝ հաշվի առնելով գործող և գործարկվելիք լեռնահարստացման համալիրների արտադրական կարողությունները:

## ՍևԱՆԱ ԼՃԻ ՀՈԼՈՑԵՆԻ ՆՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՊԱԼԻՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սահակյան Ք<sup>1.</sup>, Սահակյան Լ<sup>1.</sup>, Աթոյանց Ա<sup>2.</sup>

<sup>1</sup>ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, Երևան 0019, Մ.Բաղրամյան պող. 24ա,

<sup>2</sup>ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, ընդհանուր և մոլեկուլային գենետիկայի ամբիոն, Երևան,

Չարենցի 8

e-mail: sahayankristina@gmail.com

**Հանգուցային բառեր՝** ծաղկափռոց, վարվ, հորատանցք

Ուսումնասիրվել են Սևանա լճի մեծ ավազանի արևմտյան հատվածից վերցված Sev 17.01 հորատանցքի, 94 սմ հզորությամբ կավային նստվածքներից 10 նմուշներ՝ պալինոլոգիական անալիզի համար: Լճային ավազանում արագ նստվածքակուտակման դեպքում հնարավոր է նյութի կազմի, կառուցվածքի կտրուկ փոփոխություններ, այդ իսկ պատճառով իմերսիոն մեթոդով ուսումնասիրությունները կատարվել են յուրաքանչյուր 3-5 սմ-ից: Հորատահանունքը բաղկացած է կավային կամ կոլոիդային նյութից, քայքայված և տարանջատված միկրոօրգանիզմներից և բարձրակարգ բույսերից: Թաց նմուշները թողնում են սև հետք, որոշ հատվածներում երևում է վառվ (varve) կառուցվածքը (սեզոնային նստվածքակուտակում): Գույնը որոշվել է անմիջապես հորատահանումից հետո, քանի դեռ նյութը թաց է, որպեսզի չորացումն ու օքսիդացումը չփոխեն բնական գույնը: Նմուշներում բիթումի պարունակությունը շատ ցածր է, հորատանցքի վերին հատվածում կարբոնատի պարունակությունը ավելի բարձր է, հավանաբար տաք կլիմայով պայմանավորված: Նմուշներում առկա են դիատոմներ, սպունգներ,

կակդամորթու խեցու կտորներ, անխացած բուսական մնացորդներ, ինչպես նաև քիչ քանակությամբ քվարց, պլազիոկլազ, հրաբխային ապակի և այլ միներալներ: Սպուգների շատ առկայությունը պայմանավորված է լճի ոչ մեծ խորություններով, քանի որ վերջիններս տիպիկ բենթոս օրգանիզմներ են: Դրանք հիմնականում ջարդված են, հավանաբար տեղափոխման արդյունքում, կապված բարձր հողմնահարման գործընթացներով: Դիատոմները ավելի լավ են պահպանված, հիմնականում ունեն կենտրոնացված (*Coscinodiscophyceae*), ինչպես նաև ռադիալ սիմետրիկ (*Bacillariophyceae*) ցանցեր:

Վառվ նստվածքակուտակումը տարբերակվում է գույներով՝ սպիտակ շերտերը ամառվա ընթացքում առաջացած օրգանական նյութն է, իսկ մուգ շերտերը հիմնականում ներկայացված են կավերով, որոնք նստել են լճի հատակում ձմռան ընթացքում: Մուգ և բաց գույներով շերտի հզորությունը ~4 մմ/տ է:

Պալինոլոգիական ուսումնասիրությունների համար նմուշները մշակվել են աղաթթվով, կալիումի հիդրօքսիդով և ծանր հեղուկով (KJ և CdJ)՝ Գրիչուկի մեթոդ (Гричук, 1967):

Հորատանցքի ստորին հատվածում հայտնաբերվել են ծաղկափոշիներ, որոնք հիմնականում ծառային (arboreous) տեսակին են պատկանում՝ սոճազգիների *Pinus* (սոճի), հաճարազգիների *Quercus* (կաղնի), ձիթենազգիների *Fraxinus* (հացենի), քիչ քանակությամբ կեչազգիների *Corylus* (տխլենի) ընտանիքներից: Հանդիպում են նաև մեծ քանակությամբ ծաղկափոշիներ վարդազգիների (*Rosaceae*) և թելուկազգիների (*Chenopodiaceae*) ընտանիքներից:

Ներկայացված ծառերը և թփերը հիմնականում լուսասեր են, երաշտակայուն և ցրտադիմացկուն, բացի *Corylus* (տխլենի) տեսակից, ինչը սովերասեր է, հողի խոնավության նկատմամբ շատ պահանջկոտ:

### Գրականության ցանկ

Гричук В. П. Новый метод обработки осадочных пород для пыльцы и спор и его применение в палеогеографии. М., Географгиз, 1948.

**ՔՐՈՄԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՖԻԶԻԿԱ - ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ  
ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ  
(ՀՀ և ԱՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)  
Քարամյան Ռ.Ա.<sup>1</sup>, Իզիթյան Հ.Ա.<sup>2</sup>, Մինասյան Ռ.Ս.<sup>1</sup>**

<sup>1</sup>ՀՀ ԳԱԱ Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

<sup>2</sup>ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

e-mail: [r.karamyan@ysu.am](mailto:r.karamyan@ysu.am)

**Հանգուցային բառեր**՝ քրոմիտի հանքավայր, պետրոֆիզիկա, մոդելավորում

Ներկայումս դժվար է գտնել գիտության կամ տեխնիկայի որևէ բնագավառ, որտեղ չօգտագործվեն մոդելավորման սկզբունքները: Մասնավորապես հոդվածում ֆիզիկա-երկրաբանական մոդելի (ՖԵՄ-ի) կառուցումը օգտագործված է Շորժա (ՀՀ) և Տափասար – Նիկոլանսկ (ԱՀ) քրոմիտային հանքավայրերի դաշտային տվյալների մշակման, այլ նաև որոնողական համալիրի ընտրության հիմնավորման փուլում: ՖԵՄ-ի ձևավորման համար հիմք է հանդիսացել, առաջին հերթին ուսումնասիրված տարածքի պետրոֆիզիկական մոդելը (ՊԵՄ), որի կազմման համար հաշվի է առնված ապարների ֆիզիկական հատկությունների տարածական բաշխվածությունը, պայմանավորված ուսումնասիրվող հանքային դաշտի բնույթից: Հայտնի է, որ ՖԵՄ-ի քանակական բնութագրերը ընդունված են բաժանել երեք կատեգորիայի, կախված օբյեկտի պետրոֆիզիկական ցուցանիշներից, դրա չափերից և ձևից: Տարածքի մոդելների կառուցումը իրականացված է հետևյալ հաջորդականությամբ. 1) երկրաբանական խնդրի լուծման երկրաֆիզիկական ուսումնասիրությունների ձևակերպմամբ, 2) որոնվող քրոմիտի հանքավայրերի տեսակի ընտրությամբ և դրա երկրաբանական պայմաններով, 3) մոդելավորող օբյեկտները ներփակող միջավայրի պետրոֆիզիկական հատկությունների հաշվառումով, 4) ստացված արդյունքների համեմատմամբ էտալոն (հայտնի) երկրաբանական օբյեկտների հետ: Տեղամասների ՖԵՄ-երի ձևավորման գործընթացը իրականացված է հետևյալ երեք փուլերով: **Առաջին փուլը** համընկնում է երկրաֆիզիկական հետազոտությունների սկզբին, երբ բացակայում կամ սահմանափակ են ուսումնասիրությունների նյութերը: Տվյալ փուլում կիրառված է անալոգիայի մեթոդը՝ օգտագործված են այլ շրջաններում նույնատիպ երկրաբանական կառուցվածք ունեցող տարածքներում կատարված երկրաֆիզիկական աշխատանքների արդյունքները: **ՖԵՄ-ի ձևավորման երկրորդ փուլում** վերլուծված են իրականացված փորձամեթոդական ուսումնասիրությունների տվյալները, որոնց հիման վրա հիմնավորված է առաջարկվող երկրաֆիզիկական մեթոդների արդյունավետ համալիրը: **Երրորդ փուլում** վերլուծվել և օգտագործվել են այն գործնական նյութերը, որոնք ստացվել են ՀՀ և ԱՀ իրականացված դաշտային աշխատանքների արդյունքում:

Իրականացված ուսումնասիրությունները բերել են հետևյալ հիմնական եզրահանգումների.

Ուսումնասիրված տարածքներում կատարված են աշխատանքներ հիմնականում մագնիսահետախուզական մեթոդով (1:2500) և առանձին պրոֆիլներով գրավի-էլեկտրոհետախուզական չափումներով:

Առաջարկված ուսումնասիրությունների համալիրը առաջնահերթ ընդգրկում է հետևյալ երկրաֆիզիկական մեթոդները՝ մանրագնին գրավիհետախուզություն, մագնիսահետախուզություն, էլեկտրահետախուզություն՝ հարուցված բևեռացման

(ՀԲ) և առանձին դեպքերում ցածր հաճախականությունների էլեկտրամագնիսական և բնական էլեկտրական դաշտի (ԲԵՂ) մեթոդներով:

Երկրաֆիզիկական դաշտային աշխատանքները առաջարկվում է իրականացնել մանրագնին 1:500 – 1:1000 մասշտաբով, «շախմատաձև» ցանցի կիրառմամբ, 2D – 3D հանույթներով:

ՀՀ և ԱՀ տարածքներում իրականացնել քրոմիտի հանքավայրերի երկրաֆիզիկական լրացուցիչ ուսումնասիրություններ հիմնավորված մեթոդաբանության և առաջարկված դաշտային համալիրի կիրառմամբ:

## JURASSIC BONINITIC AND POSSIBLE ADAKITIC MAGMATISM FROM THE SOMKHETO-KARABAGH ISLAND-ARC SYSTEM, LESSER CAUCASUS

Atayan L.

Institute of Geological Sciences NAS RA; 24a M. Baghramian Ave., Yerevan 0019, Republic of Armenia,  
e-mail: lousineatayan@yahoo.com

**Keywords:** Lesser Caucasus, subduction, petrology

Jurassic series of the Somkheto-Karabagh (SK) zone are one of the main tectonic units of the Lesser Caucasus. In the study area magmatism took place in the Early(?)–Middle and Late Jurassic epochs, and volcanism had mainly submarine nature, about which indicates the existence of huge pillow lavas (sizes of the pillows are 0.4–2m and more), spilites, amygdaloidal texture of volcanic rocks, tuffites etc. (Galoyan et al., 2013; 2018). The presence of powerful andesitic series (1500–2600m) explains that a considerable amount of water has penetrated into the magma chamber as a result of the absorption of the oceanic crust.

Previous researchers conducted petrological and experimental investigations in the study area, and as a result proposed a possible evolution of the Middle Jurassic boninitic magmas up to rhyolites, and determined the conditions of acidic boninitic rocks generation and depth of crystallization (1095–965°C; 1.1–1.9 km) (Maghakyan et al., 1993). Our petrological studies also confirm the presence of the Middle Jurassic boninitic magmas along the SK zone. Unlike the plutonic series (tonalitic formation) Late Jurassic volcanism is not thoroughly studied geochemically, sometimes the rocks are strictly altered. Volcanic rocks are mainly represented by medium and acidic compositions. Moreover, for Late Jurassic epoch we suggest a hypothesis about adakitic magmatism too. Although both boninites and adakites are hot subduction zone-related magmas, these two types of volcanic rocks are rarely found in association.

Geochemical data of Jurassic series from Alaverdi region (Mederer et al., 2014) of Armenia and from Pontides (Genç and Tüysüz, 2010; Şen, 2007) of Turkey are also used for



comparison and interpretation. Boninites and boninitic andesites, dacites, and rhyolites belong to low-Ca ( $\text{CaO}/\text{Al}_2\text{O}_3 < 0.5$  wt %) boninitic series (Crawford, 1989), exhibit high concentration of  $\text{SiO}_2$  (average 58.07 wt%; range 50.03–63.35 wt %), and  $\text{MgO}$  (average 10.43 wt%; range 6.01–16.88 wt %). The Cr, Co, and Ni concentrations are higher (average Cr - 550 ppm; average Co - 42 ppm; average Ni - 155 ppm). Studied several samples of high-Mg adakites ( $\text{Mg} > 2$  wt %) have higher Sr contents with respect to their lower Y contents (average Sr - 550 ppm; average Y - 12 ppm; average Sr/Y - 45.8).

Low-Ca boninite magma generation requires high P-T conditions. In contrast, high-Mg adakite generation requires higher temperatures and deeper slab conditions and deeper less hot mantle melting conditions (Li et al., 2013). In our case, adakitic magmatism occurred later (Late Jurassic), than the boninitic magmatism (Early(?)–Middle Jurassic). The investigated mafic rocks of Early (?)–Middle Jurassic are formed probably during the partial melting of the depleted mantle source.

## Reference

- Crawford A.J. 1989. Classification, petrogenesis and tectonic setting of boninite. In: Crawford, A. J. (ed.) *Boninite and Related Rocks*. London: Unwin Hyman, pp. 1-49.
- Galoyan Gh.L., Melkonyan R.L., Atayan L.S., Chung S.-L., Khorenyan R.H., Lee Y.-H., Amiraghyan S.V. 2018. On the petrology and geochemistry of Jurassic magmatics of the Somkheti segment of Somkheto-Karabagh tectonic zone (northern Armenia). *Proceed. Nas RA, Earth Sciences*, 71, N1, 3-27.
- Galoyan Gh.L., Melkonyan R.L., Chung S.-L., Khorenyan R.H., Atayan L.S., Hung Ch.-H., Amiraghyan S.V. 2013. To the petrology and geochemistry of Jurassic island-Arc magmatic rocks of the Karabagh segment of the Somkheto-Karabagh terrain. *Proceed. Nas RA, Earth Sciences*, 66, N1, 3-22 (in Russian).
- Genç, Ş.C., Tüysüz O. 2010. Tectonic setting of the Jurassic bimodal magmatism in the Sakarya Zone (Central and Western Pontides), Northern Turkey: A geochemical and isotopic approach, *Lithos* 118, 95-111.
- Li Y.-B., Kimura J.-I., Machida Sh., Ishii T., Ishiwatari A. et al. 2013. High-Mg Adakite and Low-Ca Boninite from a Bonin Fore-arc Seamount: Implications for the Reaction between Slab Melts and Depleted Mantle. *Journal of Petrology* 54, N6, 1149-1175.
- Maghakyan R., Sobolev A.V., Zakariadze G.S., Kononkova N.N. 1993. Petrology of differentiated boninite magmas on the example of the Mesozoic Lesser-Caucasian island arc, *PETROLOGY*, vol. 1, N4, 431-448 (in Russian).
- Mederer J., Moritz R., Zohrabyan S., Vardanyan A., Melkonyan R., Ulianov A. 2014. Base and precious metal mineralization in Middle Jurassic rocks of the Lesser Caucasus: A review of geology and metallogeny and new data from the Kapan, Alaverdi and Mehmana districts. *Ore Geology Reviews* 58, 185-2078.
- Şen C. 2007. Jurassic Volcanism in the Eastern Pontides: Is it Rift Related or Subduction Related? *Turkish Journal of Earth Sciences (Turkish J. Earth Sci.)*, vol. 16, 523–539.

## GEOLOGY AND ORIGIN OF KARIN TAK CAVE (REPUBLIC OF ARTSAKH)

Avagyan A.<sup>1</sup>, Sahakyan L.<sup>1</sup>, Yepiskoposyan L.<sup>2</sup>, Grigoryan T.<sup>1</sup>, Sahakyan K.<sup>1</sup>, Atalyan T.<sup>1</sup>

1. Institute of Geological Sciences, Academy of Sciences of Armenia; M. Baghramyan ave. 24a, 0019 Yerevan, Armenia; e-mail: [avagn1064@gmail.com](mailto:avagn1064@gmail.com)

2. Institute of Molecular Biology, NAS RA, 7, Hasratyan St., 0014, Yerevan, Armenia

**Keywords:** limestone cave, Palaeolithic, Shushi

